

«ԳՐԻՆ ՖԱՐՄԵՐ»

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

2023Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ

ԵՎ ԱՅԴ ԱՄՍԱԹՎԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԵՎ

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Անկախ աուդիտորական եզրակացություն	3
Ֆինանսական հաշվետվություններ	
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	6
Ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն	7
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	8
Դրամական հոսքերի մասին հաշվետվություն	9
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	10

ԱՆԿԱԽ ԱՌԻԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ներկայացվում է «Գրին Ֆարմեր» ՍՊԸ-ի մասնակիցներին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Գրին Ֆարմեր» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) կից ներկայացված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31-ը դեկտեմբերի 2023թ., այդ ամսաթվին ավարտված տարվա համար ֆինանսական արդյունքի մասին, սեփական կապիտալում փոփոխությունների մասին և դրամական հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի վերաբերյալ համառոտագիրը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ընկերության ֆինանսական վիճակը 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքը և դրամական հոսքերը՝ համաձայն փոքր և միջին կազմակերպությունների Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտի (ՓՄԿ-ների ՖՀՄՍ):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտին իրականացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀՄԷՄԽ կանոնների: Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ի համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Ընկերությունը լուծարելու կամ Ընկերության գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՄ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՄ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում:
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերության դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Ղեկավարությանը, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:



Թաթուլ Մովսիսյան

Գլխավոր տնօրեն/ Առաջադրանքի ղեկավար

26 հունիսի, 2024թ.

ք.Երևան, Պ.Սևակի 8



**«Գրին Ֆարմեր» սահմանափակ պարտասխանավորությամբ ընկերություն
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**

<i>‘000 դրամ</i>	<i>31/12/23</i>	<i>31/12/22</i>
Ակտիվ		
Հիմնական միջոցներ	9,366,334	9,763,396
Ոչ նյութական ակտիվներ	1,929	2,382
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ	9,368,263	9,765,778
Պաշարներ	669,847	789,310
Կանխավճարներ պաշարների և ծառայությունների համար	37,905	1,294
Առևտրական դեբիտորական պարտքեր	75,898	37,532
Այլ ընթացիկ հարկային ակտիվներ	17,276	15,702
Դրամական միջոցներ	339	886
Այլ ընթացիկ ակտիվներ	735	3,694
Ընդամենը ընթացիկ ակտիվներ	802,000	848,417
Ընդամենը ակտիվներ	10,170,263	10,614,195
Սեփական կապիտալ և պարտավորություններ		
Կանոնադրական կապիտալ	50,959	50,959
Զբաղիված շահույթ	546,714	407,507
Սեփական կապիտալի այլ տարր	1,283,906	1,624,662
Էմիսիոն եկամուտ	777,235	777,235
Ընդամենը սեփական կապիտալ	2,658,814	2,860,364
Վարկեր	2,843,161	3,310,502
Փոխառություններ	3,038,441	2,796,121
Ակտիվներին վերաբերող շնորհներ	347	411
Հետաձգված հարկային պարտավորություններ	295,495	370,909
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ	6,177,445	6,477,943
Վարկեր	884,883	851,295
Փոխառություններ	199,197	193,060
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	166,962	193,219
Կանխավճար ծառայությունների համար	50,792	1,699
Այլ ընթացիկ հարկային պարտավորություններ	15,087	12,801
Աշխատավարձի և այլ կարճ.հատուց-ի գծով պարտ-թյուն	15,763	21,305
Եկամուտներին վերաբերող շնորհներ	1,320	2,509
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ	1,334,004	1,275,888
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ	10,170,263	10,614,195

Տնօրեն

Գլխավոր հաշվապահ



Ռոբերտ Կոծինյան

Տիգրան Օրբելյան

«Գրին Ֆարմեր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
Ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն
2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

000 դրամ

	31/12/23	31/12/22
Վաճառքից հասույթ	3,550,680	1,966,093
Վաճառքի ինքնարժեք	(3,287,647)	(1,858,081)
Համախառն շահույթ	263,033	108,012
Այլ եկամուտներ	61,870	12,155
Իրացման ծախսեր	(725,640)	(506,350)
Վարչական ծախսեր	(120,125)	(122,690)
Գյուղատնտեսական արտադրանքի բերքահավաքի պահին «իրական արժեք հանած վաճառքի հետ կապված ծախսումներ»-ով ճանաչումից օգուտ	3,428,144	2,032,615
Գյուղատնտեսական գործունեությունից ծախսեր	(2,014,182)	(1,724,345)
Դեբիտորական պարտքերի արժեզրկումից կորուստներ	-	(4,037)
Այլ ծախսեր	(76,026)	(317,827)
Գործառնական շահույթ	817,074	(522,467)
Ֆինանսական եկամուտներ	1	4
Ֆինանսական ծախսեր	(783,961)	(431,017)
Փոխարժեքային տարբերությունից օգուտ (վնաս)	(310,078)	1,506,519
Շահույթ մինչև հարկումը	(276,964)	553,040
Շահութահարկի գծով ծախս (եկամուտ)	614	(4,528)
Զուտ շահույթ	(276,350)	548,513

Տնօրեն

Գլխավոր հաշվապահ



Ռոբերտ Կոծինյան

Տիգրան Օրբելյան

**«Գրին Ֆարմեր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն
2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար**

‘000 դրամ

	Կանոնա- դրական կապիտալ	Կուրակված (շահույթ) վնաս	Սեփական կապիտալի այլ տար	Էմիսիոն եկամուր	Ընդամենը
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2021թ.	50,959	(318,610)	1,770,298	777,235	2,279,882
Զուտ շահույթ	-	-	-	-	-
Ավելացում/պակասեցում		726,117	(145,635)		580,481
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2022թ.	50,959	407,507	1,624,662	777,235	2,860,363
Զուտ շահույթ	-	(276,350)	-	-	(276,350)
Ավելացում/պակասեցում	-	415,557	(340,756)	-	74,800
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2023թ.	50,959	546,714	1,283,906	777,235	2,658,814

Տնօրեն

Գլխավոր հաշվապահ



Ռոբերտ Կոծինյան

Տիգրան Օրբելյան

«Գրին Ֆարմեր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
Դրամական հոսքերի մասին հաշվետվություն
2023թ. Դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

<i>‘000 դրամ</i>	2023	2022
Գործառնական գործունեությունից դրամական հոսքեր		
արտադրանքի, ապրանքների, ծառայությունների վաճառքից	3,614,776	1,990,824
այլ ներհոսքեր	67,863	190,875
նյութերի, ապրանքների, ծառայությունների ձեռք բերումից	(1,914,367)	(1,891,327)
աշխատակիցներին և նրանց անունից կատարված վճարումից	(466,872)	(481,698)
այլ հարկերի, պարտադիր վճարների վճարումից	(38,263)	(96,911)
այլ արտահոսքեր	(990)	(2,431)
Գործառնական գործունեությունից դրամական զույր հոսքեր	1,262,147	(290,669)
Ներդրումային գործունեությունից դրամական հոսքեր		
հիմնական միջոցների վաճառքից	-	6,030
տրված փոխառությունների մարումից	5,500	35,050
տոկոսների ստացումից	1	4
հիմնական միջոցների ձեռքբերումից	(5,678)	(153,306)
փոխառությունների տրամադրումից	(5,500)	(35,000)
Ներդրումային գործունեությունից դրամական զույր հոսքեր	(5,677)	(147,221)
Ֆինանսական գործունեությունից դրամական հոսքեր		
վարկերից և փոխառությունների ստացումից	1,310,928	2,416,096
վարկերի, փոխառությունների մարումից	(2,232,507)	(1,778,991)
տոկոսների վճարումից	(329,019)	(216,199)
Ֆինանսական գործունեությունից դրամական զույր հոսքեր	(1,250,598)	420,906
Ընդամենը դրամական միջոցների զուտ հոսքեր	5,871	(16,985)
արտարժույթի փոխարժեքային տարբերություններ	(6,418)	1,343
Դրամական միջոցների մնացորդը առ 1 հունվարի	886	16,528
Դրամական միջոցների մնացորդը առ 31 դեկտեմբերի	339	886

Տնօրեն

Ռոբերտ Կոծինյան

Գլխավոր հաշվապահ

Տիգրան Օրբելյան

